

X

19165

3.

2.

ԱՄՊՐԷ

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ



ՎԱՂԱՐՇԱՊԱՏ

ՍԱՐԱՆ - ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷԶՄԻԱՆՆԻ

1906

891.99

Ա-50

891.99

Ա-50

uy

Ա.Մ.Պ.Բ.Է

20 JAN 2006
EROS SU. 8 U
19 NOV 2010

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ

1906
27198



ՎԱՂԱՐՇԱՊԱՏ

ՏՊԱՐԱՆ ՄԱՅՐ ԱՊՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷԶՄԻԱՆՆԻ

1906

08.02.2013

19165

ՀԱՅԿԱՅԻՆ ԳԼԽԱՎՈՐ ԳՐԱԴԱՐԱՆ

Дозволено Цензурою 5 Мая 1906 г. Тифлисть



* *

Սիրազորով հնչիւնները մայիսի
Պապանծուել են ցուրտ ձմեռուայ սարսուռով:
Ու մահաշունչ քամիները հիւսիսի
Մահ են սփռում ամենայն տեղ անխռով:

Ու սև վշտից ոտքի ելած ալիներն
Աղմկում են խենդ-ցնորուած աղմուկով:
Սեւեր հազած՝ խեղճ սգաւոր այս գիշերն
Լաց է լինում յորդ ու առատ արցունքով:

Չկայ լուսին, չկան աստղեր գեղադարձ,
Ոչ նուրբ ամպի՝ լուսնից խլած՝ դալուկ վարդ,
Չկան երգեր, չկան սրտեր սիրավառ:
Ոչ կապոյտի ժպիտները այն պայծառ:

Ու ձմեռուայ նման սիրտս ալեկոծ՝
Գուրս եմ եկեր ու զնում եմ ծովի ափ:
Մենակ, չորս ղիս սև գիշերը տխրահոտ:
Տարածում է լուաւար, մուայլ ու սարսափ:
— Ինչ էք ողբում խեղճ ալիներ դառնացած,
— Ինչ էք ուզում ձեր ափերից քարացած,
Չէք տեսնում որ դարեր երկար անվատակ
Չեր քայլերին կապանք զրին համարձակ:
Եւ ո՞ր աստուածն նոցա կրճքին ապառաժ

Ուղղեց շանթերն իւր զահոյքի բարձունքից.
Կամ ո՞ր աստուածն ձեզ վշտակից՝ տիրաբար
Նոցա սաստեց անծայրածիր երկնքից . . .
Ինձ չեն լսում ալիները փրփրադէզ
Ողբով ճիւղով սուլոցներով աղեկէզ
Շտապում դէպի ավերն՝ ու ծեծում են շարունակ.
Ու կանգնած եմ ու նայում եմ ծով վշտերովս
միայնակ:

1905 թ. Դեկտեմ. 19-ին Բագ. սպիտակ ֆաղափ.

ԶԴՐԺԵՍ ԲՈ ՈՒԽՏԸ

Եղբայր իմ, տանջուած,
Եղբայր իմ պանտուխ
Հալածանքների, նեղութեան օրին
Չ'յուսահատուիս, չգրժես քո ուխտ,
Չ'լինիս խեղճ զոհ երերուն բախտին:
Տանջանքի խաչը ուսերիդ պահած
Բարձրացիր միշտ վեր՝ քրտնաթոր ճակտով.
Եղի՛ր նահապակ միշտ յուսով լեցուած.
Միշտ դէպի մարդիկ համակուած սիրով:
Իսկ երբ պատահի, որ մարդկանց զործից
Յուզուի քո հոգին զոռ ատելութեամբ,
Ազատի՛ր սիրտդ այդ սև փոթորկից.
Ու առաջ գնայ միշտ լի բարութեամբ:

Թո՛ղ քո ճակատին չհիսեն պսակ
Աշխարհի որդիք խիստ երախտամոռ,
Թո՛ղ խնդան վրադ նաև շարունակ.
Երբ մեռնիս մենակ կեանքի կռոււմ գոռ.
Եւ Թո՛ղ քո շիրիմն չունենայ արձան,
Ոսկով արծաթով ու ծաղկով զուգուած,
Ոչ մի շիթ արցունք անշուք գերեզմանդ
Չ'ծծէ երբէք աչերից սիրած.
Բայց քո սրբազան հոգու տենչանքներն
Բուրվառի նման կխնկեն անուշ,
Բեզ կերկրպագեն, քեզ ցոյց կտան սէր.
Երբ աշխարհը փրկուի սերնդից ապուշ:
Երբ որկորի տեղ կտիրեն սրտերն
Գարնան թարմութիւն կհագնին հոգիք.
Երբ սուրը կնկնի, կանցնի սև զիշերն,
Եղբայր կլինին աշխարհի որդիք:

Ալեքսանդրովա. 1906 թ, Յունուարի 30-ին.

*
**

Աշխուժով լի կռուին ծարաւ ամեն ժամ,
Ես բաղխում եմ Մարտի դռներն համարձակ.
Ու անվհեր զինուորի պէս սրտապինդ
Ես պարզում եմ ազատութեան զրօշակ:

Իրաւունքի հոշն է ոտքիս պատուանդան,
Ազնիւ պայքար իմ գէնքերը պողպատիկի,
Երջանկութիւնն իմ նպատակ անխափան.
Ու ես վաղուց դուրս եմ եկել
Իբրեւ կռուող քաջ մարտիկ:

Յաւով թողի ես արգանդը մայրական,
Բաղդը՝ փշոտ ուղի բացաւ իմ դիմաց,
Կռիւ պայքար եղան կեանքիս ապաստան.

Օրապահ իկա սուղ միջոցներս-մի չոր հաց
Արեւի լոյսն վայելեցի կռուելով.

Աստուծոյ օրն չանցաւ երբէք անկռիւ.
Իմ գոյութիւնն միշտ պարփակուած վտանգով,
Ինձ մինչ այս օր դարձեալ պահեց նոյն կռիւ:

Աշխուժով զի կռուի պատրաստ ամեն ժամ,
Ես բաղխում եմ Մարտի դռներն համարձակ.
Ու իմ առջեւ բացում է նոր ամեն ժամ
Կռուի դաշտը՝ արնով ներկուած ընդարձակ:

1906 թ. Փետ. 20-ի Լայպցիկ.

3. ԾԵՐ ԲԱՆՈՒՈՐԻ ԵՐԳԸ.

Ինչքան խաւար է այս օրուայ զիշերն.
Լուսինն ու աստղերն ամպով սքողուած
Մարել են արդէն վերջին ճրագներն
Իսկ սիրտս անքուն՝ վշտով է լեցուած:

Վաղ առաւօտից մինչեւ երեկոյ
Դռնից դուռ ընկած գործ որոնեցի.
Աղաչանքներով աղի արցունքով
Ի զո՛ւր մարդկանց սիրտը շարժել փորձեցի:

Գիշեր է արդէն, դարձեալ գործ չունիմ.
Իսկ զրպանիս մէջ ոչ մի կռակի փող.
Ու այստեղ մենակ խուլ փողոցի մէջ
Ինձ մօտենում է մահուան վերջին դող...

Բայց ոչ. կփշրեմ այս թոյլ բազուկով
Երկաթից շինած այս ամուր դռներն,
Որոնց ետեւում հարուստ պարենով
Շարուած են անթիւ անվերջ ծրարներ:

Ապրել եմ ուզում դեռ երկար օրեր,
Օգն ու արեւը դեռ չեն զղուելի.
Դեռ չէ զղուելի ինձ և այս զիշերն
Որ ինձ թուում է խիստ ու ահաւելի:

Թո՛ղ հասնին վրաս, թո՛ղ կաշկանդեն ինձ.
Բանտի դռներից չեմ վախում երբէք,
Այն բանտի խաւար խոնաւ խորքերից
Կասեմ աշխարհին. որ գող չեմ երբէք:

Կասեմ աշխարհին ապրել եմ ուզում,
Մեռնել չեմ ուզում քաղցից ծարաւից,
Քանի հարուստն է խանութում զիղում.
Առատ ուտելիք խլած աղքատից:

Ինձնից խլել են առանց օրէնքի.

Խելել եմ ուզում ես քաղցից զրդուած.

Այդ է վճիռը արդար օրէնքի,

Այդ է միշտ ասում աղքատի Աստուած».

Բայց ո՛հ ինչ դաժան սարսափ է Աստուած.

Որ այսպէս յետ է քաշում իմ թեւերն,

Այս ի՞նչ լքումն է իմ սրտին տիրած,

Ինչո՞ւ են դողում այսպէս իմ ծնկներն:

Վհատած հոգի, թոյլ ու թուլամորթ.

Ահա թէ ինչու դողում եմ այսպէս.

Այս մեզ աւանդեց սերունդը նախորդ,

Ու թունաւորեց մեր ողջ կեանքի կէս.

Ու ես անցեալի դեռ անգոր որդին՝

Պէ՛տք է որ մեռնեմ փողոցում քաղցած.

Ըստուներով հարուստ այս մութ գիշերին,

Արժան է պահ տամ իմ հոգին լքուած:

Ու խաւարի մէջ այս ըստրուկ հոգին

Թո՛ղ զնա՝ կորչի իսպառ աշխարհից,

Որ մեզ յաջորդող դեռ մանուկ որդին

Զսովրի մեռնել ցրտից ու քաղցից:

Այլ իւր բաժնի տէր, ամեն տեղ հպարտ,

Աշխատի երգէ, վայելէ սիրով

Բախտի հետ անհաշտ, կռուի մէջ անպարտ,

Մեռնելիս մեռնի զոնէ կուշտ փորով:

1906 թ. Փետ. 7-ին Լայպցիկ.

4. ԶՈՐ ՀԱՅԻ ՀԱՄԱՐ.

Լալիս ենք անվերջ չոր հացի համար,

Ու մեր արցունքով լողացած աշխարհն

Ուզում է կռիւ, արիւն ու աւեր

Նահատակների նորանոր շարքեր.

Լալիս ենք անվերջ չոր հացի համար

Աքսորուած անտուն, պանդուխտ ու օտար.

Եւ մահուան թեւերն ցերեկ ու գիշեր

Նուէր են բերում մեզ միշտ ցուրտ ըստուեր:

Լալիս ենք անվերջ չոր հացի համար,

Մսից ու արնից զրկուած ու տկար,

Մեր ոսկորների վերջին ծուծն ու հիւթ

Ծծում է սիրով որկրամոլ հարուստ:

Ծծի՛ր այ դգրուկ, ծծի՛ր շարունակ,

Միայն ծծելու դարձած ընդունակ,

Քո գլխի վրայ մի օր վաղ թէ ուշ

Կը թափուի ահեղ զայրոյթի կրակ:

Ու քո ձեռքերով քո եղբօր համար

Կռած շղթաներն արնոտ ու ժանդոտ

Պսակ պիտ՝ դառնան քո գլխի համար,

Քեզ չարչարելու միշտ ու՛ անդադար:

Լալիս ենք անվերջ չոր հացի համար,

Մեր դառն արցունքով ողողուած աշխարհն

Ուզում է արիւն, աւեր ու աւար:
Զոհերի շարքեր միշտ ու անդադար:

1906 թ. Մարտ 6 Այապցիկ.

5. ԽԱՉԻ ԴԻՄԱՅ.

Յիսուս, խաչիդ դէմ աղօթք եմ անում,
Քո վառ սիրով է հոգիս համակուած,
Քո ոտքերիդ տակ զլուխս եմ դնում,
Քո խաչիդ հպում շրթներս սառած:

Քեզ պէս ինչ համար որկրամոլ աշխարհն
Խաչ է պատրաստել քաղցից, կարիքից,
Փշէ պսակներ ճակատիս դալկահար,
Ու հալածում է ինչ այս աշխարհից:

Ու հոգիս ահով զոգով ծանրացած
Լքման բոպէն է ինչ վրայ հասել:
Յիսուս, Քո Խաչը սրտադող զրկած
Աչքերբս Քո հեզ դէմքիդ եմ յառել:

Պարգևիր ինչ ոյժ, ու սիրտ անվրդով
Այս Գեթսեմանիս ահեղ օրերին,
Որ ես էլ խաչս սիրազեղ սրտով
Իմ գողգոթայի հասցենեմ ծայրին:

Տեսնում ես այն տեղ, այն մամբ մարող,
Ինչպէս է հեծում վերջին բոպէին

Ուղիդ հենց այդպէս սիրտս ազմկող
Հեծում է հիւժուում այս ծանր ժամին:

Յիսուս, խաչիդ դէմ աղօթք եմ անում,
Պարգևիր ինչ ոյժ, սրտիս անոյշ սէր,
Իմ արցունքներով ոտքերդ եմ թանում:
Ինչ առաջնորդի՛ր Գողգոթաս ի վեր:

1906 թ. Մարտի 7-ին Այապցիկ.

6. ՄԱՌԻԱՅԱՆԻ ԵՐԳԸ.

Վարդ երազներից իմ հոգին թափուր
Մռայլ երկինքն է թխտոտ գիշերի,
Սիրտս կսկծի արցունքի սափոր
Անխօս շիրիմն է անվերջ վշտերի:

Էլ ի՞նչ ունիմ ես աշխարհիս վրայ,
Լոկ փոթորիկներ դաժան ահաւոր,
Մուրացիկ օրուայ սևազգեստ յուշեր,
Կոպիտ մերժումներ խիտ ու թունաւոր:

Ի՞նչ ես ուզում սիրտ ապրի՞լ թէ մեռնե՞լ
Շիրմի լուռութեն, թէ անվերջ տանջա՞նք,
Միայն ողբերի խոսք երգեր հիւսել
Թէ նիրհել հանգիստ, առանց տառապանք:
Նիրհե՛լ, ոչ երբէք, տանջուել, անիծել
Մինչև անէծքից հիւսուած զօրու թիւնն,

Պայթի ու մերժէ սև բաղտի զիշերն,
Մինչև որ հասնի կեանքի թարմ զարունն:

Մինչև տենչանքներ տանջանքից ծնած
Խզեն շղթաներն կենսունակ ուժով:

Նոր բաղտին խապաւ բոլորը նուիրուած
Ասպարէզ անցնեն, դործեն աշխուժով:

Մինչև որ մարդիկ իբրև եղբայրն՝
Թողնեն արեան դաշտ սուր ու թշնամանք,

Եւ մինչև փռէ իւր ոսկի թևեր

Փրկութեան այգը, անցնի տառապանք:

7 ԱՂՔԱՏ ՊԱՆԴԽԻ ԵՐԳԸ.

Երգիւր, ո՛վ հոգիս, վշտանուշ ձայնով
Տառապանքներիդ ցրտաշունչ օրեր,

Թէ ինչպէս վիշտը երկաթ ձեռներով
Խլեց քո վերջին դալուկ ժպիտներն:

Չէ, որ տարաբաղտ յետ ընկած թռչնիկն
Երգում է տխուր իւր ծանր վերքերն

Երբ նորա գլխին աշնան փոթորիկն
Մաղում է վերջին անձրևի շթերն:

Դու էլ տարաբաղտ, աշնան օրերին
Ձրկուած ընկերից, հայրենի բնից

Չու՞մ ես մենակ գիշերով խորին
Հալածուած սրտի ահեղ փոթորկից:

Իմ՝ գլխին նոյնպէս մաղու՞մ են անվերջ
Աշնան փոթորկի վերջին կաթիլներ,

Ու քո յանդիման մի ուղի անվերջ,
Գնա՛, թափառի՛ր օրեր տարիներ:

Բայց այս ի՞նչ շշուկ, ի՞նչ ողբ է խորին
Որ ես լսում եմ անտառի խորքից,

Ինչո՞ւ է այսպէս երկինքը լռին
Ամպեր ու ամպեր դուրս տալիս օրտից:

Ինչո՞ւ են այսպէս հարաւն ու հիւսիս
Եւ ողջ հորիզոնն սևով սքողուել,

Ու անմխիթար մենակ ճամբորդիս
Մահուան, կսկծի երգը սկսել:

Օ՛, բաղդս սև է, տանջանքս անվերջ,
Սիրտս կատաղած, հոգիս մոլորուած,

Անէճքի հրդեհ-հրաբուխն անշէջ
Նոր է իմ ներսումն ուժգին բռնկած:

Անէճք քեզ աշխարհ, որ այսպէս շուտով
Խլեցի՛ր ինձնից ոսկի երազներն,

Անէճք քեզ երկինք, որ կապար սրտով
Սփռեցի՛ր վերաս քո խաւար թևերն:

Անէճք ձեզ մարդիկ, որ մաքուր հոգիս
Լեցուցիք մեղքի ժանկոտ մրուրով.

Խլեցիք չքնաղ ծաղիկներն սրտիս,
Տեղը տուեցիք դժին լի փշով:

Ես չեմ որոնել ձրի հաց ու փող,
Ես չեմ որոնել ձրի հաց ու փող,

Այլ ջանք ու քրտինք հարուստ արդիւնքով:
 Չեմ ձգտած լինել հզօր ու իշխող:
 Այլ ազատ անկախ, արդար վաստակով:
 Ու իմ հոգու մէջ ոսկի թւերով:
 Քաղմել է երկար մարդասիրութիւնն,
 Կուրծքս լի սիրով, հոգիս լի սիրով:
 Միշտ երազել եմ կեանքի վառ դարուն:
 Բայց ո՞ւր են նոքա... ո՞ւր, ո՞ւր այդպէս շուտ
 Թռաք, սլացաք անոյշ իդեալներ,
 Ու ինձ թողեցիք այս կեանքի մէջ սուտ:
 Մենակ չարատանջ, անտուն, անընկեր...
 Գնացէք բարեաւ, և ես մոլորուած
 Յառաջ կտանեմ իմ ուղին մենակ:
 Ու զիշերներին յողնած ու քաղցած
 Կը ողբամ ես ձեզ այսպէս շարունակ:
 Երգի՛ր, ո՛վ հոգիս վշտանաւ ձայնով
 Տառապանքներից ցրտաշունչ օրերն,
 Երգի՛ր, միշտ երգի՛ր, մինչ ցուրտ թւերով
 Կը զիկէ և քեզ մահուան սև զիշերն:
 1906 թ. Փետ. 11-ին Լայպցիկ.

8

* *

Մտաւորաւ անցաւ ցերեկն ինձ համար,
 Չարատանջ հոգիս ի՞նչ ես պատրաստում:

Գիշերը մթին, դժգոյն դալիահար
 Քեզ համար ոչինչ այսօր չի բերում:
 Կուգես աղօթել՝ ի գուր ապաստան
 Վաղուց են քնել կարող աստուածներն,
 Նրանցից չկայ դուժ ու դատաստան,
 Նրանցից չկայ խնամք ու ջինջ սէր:
 Հեռուն տեսնում ես ի՞նչպէս ցոլալով
 Աստղիկն է փախչում, թաղչում ամպի տակ,
 Ու ծառերի մէջ հանդարտ սողալով
 Դէպ վերն է քաշում մէզը սպիտակ:
 Այդպէս երազիդ վերջին աստղիկն էլ
 Սլացաւ, կորաւ, անհետ յաւիտեան:
 Ու վշտի մէջն է, որ քեզ է զրկել
 Ու խեղդում է քեզ լուին ու անձայն:
 Սրտը շաւ անցաւ ցերեկն ինձ համար,
 Գիշերուայ փեշերն փռուած են չորս դին,
 Ու արնոտ սիրտս տանջուած, դալիահար
 Մահուան երգերէ լսում թախծաղին:

1906 թ. Փետ. Լայպցիկ.

9 ՅՈՒՍԱՀՍՏՈՒԹԻՒՆ.

Կորաւ իմ հաւատ, ի գուր աշխատանք,
 Մարդիկ փրկութեան չունին նպատակ:

Սկզբից տանջանք յաւիտեան տանջանք:

Մարել է հոգուս սրբազան կրակը:

Արիւն սւ արցունք. բանտ, շղթայ կապանք:

Ահա մեր վաստակ դարեր շարունակ,

Անմեղի համար խաչի չարչարանք:

Բռնութեան համար դահ, թագ ու պսակ:

Ուտում են մարդիկ անկուշտ իրար միս,

Խմում են արիւն, արցունք ու քրտինք:

Սե է մեզ օրը. ցաւ է մեզ ամիս,

Տարին անպտուղ ու անվերջ չարիք:

Մեռաւ իմ հաւատն, ի դուր աշխատանք,

Ծագում է օրը ինձ համար անյոյս:

Ու մարդկանց համար սկսուած տանջանքը:

Չունի էլ վախճան, ոչ մի վերջալոյս:

1906 թ. Յունուարի 30-ին Ալեքանդրովա.

10 ՔՍ.ՂՅԱԾԻ ԵՐԳԸ.

Մենակութեան մէջ օրերս անցան,

Սիրտս ջախջախուեց եղէգի նման,

Ու քաղցր սիրոյ երգի փոխանակ

Հոգիս ողբերգեր լսեց շարունակ:

Իսկ այս օր գիշեր՝ անցեալի յուշեր

Խուժում դալիս են ահեղ հոսանքով:

Իսկ դուռս անվերջ-հոգի լրարե՞ր

Ծեծում է սաստիկ կատաղած կըքով:

Ո՞վ ես, որ այդպէս ուժգին ու ջղոտ

Ծեծում ես դուռս, մինչ սիրտս վախկոտ

Հոգուս հանգստի կորուստն է ողբում,

Ու արեան շթեր աչքերից թափում:

Ի՞նչ ես ինձ բերել, հա՞ց թէ բարի լուր,

Թէ՛ դու էլ ինձ պէս լքուած ու տխուր

Կեանքիդ բեկորներն պահելու համար

Ծեծում ես դուռս, ծեծում անգաղար:

Ո՞վ ես ասա՛ ինձ զխուլութեան ոգին,

Կարող ես ցոյց տալ փրկութեան ուղին,

Թէ՛ դու էլ ուղիդ վաղուց կորցրած

Յանկարձ քեզ դտար իմ դռան դիմաց...

Սրտիս փոթորկից իսպառ մոլորուած

Մահուան զաներն են բացում իմ դիմաց,

Խեղճ զոհ եմ դառնում բաղտիս անողոր,

Դժգոհ՝ արնաքամ, շրթներիս բողոք:

Ես էլ ունեցայ ոսկի երազներ,

Մարդկութեան համար վճիտ, անհուն սէր,

Բայց մարդկանց անմիտ կատաղի կռուին

Կողոպուտ դարձան նոքա ողջովին:

Արիւն չեմ սիրել և ոչ պատերազմ,

Անմիտ է թուել ինձ և զէնքի խաղճը,

Իսկ այսօր չորս կողմ՝ դեղեցիկ աշխարհն



Մարդկանց արեամբ է ներկւում անդադար:

Ի՞նչ կայ, չլի՞նի արեան դաշտերից
Յաղթութեան լուրն ես բերում ինձ մէկից.
Ու իմ երազներն չքնաղ ու անզին
Ինձ յետ ես տալիս այդպիսով կրկին:

Բայց դուր բանամ... Հա՛ դու ես դաժան.
Կեանքը քեզ վաղուց ծախուած է էժան:
Այսօր չորս օր է, որ լոկ չոր հացով
Կռիւ եմ մղում քեզ դէմ անգութ սով:

Բայց այսօր ինչպէս սիրտս է վկայում
Յաղթութեան դափնին շուտ քեզ է մնում
Բայց կռուի պատրաստ ուժերովս վերջին
Կաշխատեմ պահել կեանքս թանգագին:

1906 թ. Մարտ 10-ին Լայպցիկ.

11 ԵՐԵԿՈՅ.

Երեկոյ է. վերջալուսի վարդ շողերն
Մեղմ հպում են երկնի կապոյտ եգերքին,
Ու ոսկեգոյն զանգուր կտրած նուրբ ամպերն
Ծաւալում են սէր ու ժպիտ ցնծագին:

Իսկ ըստուերներն կամաց դողդոջ ու լռին
Դաշտի վրայ տարածւում են շարունակ.
Խուլ հնչում է վերջի շշուկն անտառին
Ու շնչում է խաղաղութիւն երկնի անձայր կա-
պուտակն:

Ու նայում եմ պատուհանից դաշտերին,
Խաղաղութիւն, այս է փտում իմ հոգին,
Իսկ հրաբուխ տենչերիս տեղ անուշ քուն
Համեստ քնքուշ ինչպէս աշնան իրիկուն:

1906 Մարտ 14-ին.

12 ԳԱՂՏՆԻ ԹԱՂՈՒՄՆ.

Թաղում կայ այսօր լռին գիշերով
Չէ՞ք լալիս, աստղեր, այս մահուան համար,
Մեռել են սրտիս թէ տենչ, թէ գորով:

Չէ՞ք լալիս, աստղեր, այս մահուան համար:

Անցեալն էր անուշ, երբ սիրտս զեղուն
Դարնան վարդի պէս բացւում էր ուրախ,
Տանջանքից ազատ, իւր բաղդով հարուստ
Երգում էր անուշ սիրոյ քաղցր տաղ:

Եւ մանկութիւնից ժառանգած տենչերն
Դեռ ոսկեպսակ թարմ ծաղիկներով
Ինձ բուրում էին ցերեկն ու գիշեր,
Ինձ բուրում էին մի անկեղծ սիրով:

Եւ այն օր դուք էլ զլիսի վերելից
Ժպտում էիք ինձ անուշիկ դէմքով,
Ես ձեր որդեգիր, ներշնչուած ձեզնից
Նայում էի ձեզ ժպտող աչերով:

Իսկ այսօր թաղման թախիժով լեցուած

Վերջին կահանքն է դողում իմ շրթին,
Այսօր նոյն աչերն արտասուքով թաց
Ձեր լացն եմ խնդրում ճնշուած ողջովին:

Այսօր անապատ մենակութեան մէջ
Լսվում եմ չորս դիւս միայն փոթորիկի
Տեսնում եմ դադան՝ լի ռսով անշէջ
Արիւնով ներկուած արնարբու մարդիկ:

Տանջում են, մորթում ի զուր ու անմիտ,
Խլում են, լափում անկուշտ որդորով,
Ձոհում են անմեղն, բարին միամիտն,
Դաշտերն են ծածկուած թարմ գիւղիկներով:

Ու գիւղիկների անհամար շարքին
Ընկեր են դարձել իմ ամբողջ տենչերն,
Որ շատ անգամ են լեցրել իմ հոգին
Վառ երազներով սուրբ ու սիրանուէր:

Թաղում կայ այսօր լռին զիշերով
Ձէք լալիս ինձ հետ, երկնքի աստղեր,
Մարդկանց արցունքը պղծուած է թոյնով
Թող այս մահճը չլան նոցա չար աչքերն

1906 թ. Մարտ 28-ին ձեմարան.

13 Յ Ա. Ռ. Ա. Ջ.

Յառաջ իմ ընկեր, անխախտ անսասան,
Հանգստանալու չունինք ժամանակ,

Դեռ չէ յաղթուած արնոտ մարդ դադան,
Ու մեր փրկութեան չի հնչել զանգակ:

Լսում ես ահա զինուած բանակներն
Թափւում են դաշտը ռսով բռնկուած,
Մահուան, աւերի չարագոյժ բօթերն
Հնչում են անվերջ խրոխտ յաղթապանծ.

Եւ կապոյտ երկնի կամարի ներքեւ
Կանգնած են Մարտի անթիւ տաճարներ,
Ու մայր չի մտնում ոչ մի օր արեւ
Առանց տեսնելու արեան յորդ գետեր:

Յառաջ եմ ընկեր, և քարոզիր սէր
Կռուից ոչ մի շահ չկայ աշխարհին
Թող սառի շրթիդ կռուի հրաւերն,
Թող խաղաղութիւն լեցնի քո հոգին:

1906 թ. Մարտի 5 Լայպցիկ.

ՅՈՒՍԱԽԱՐ ՊԱՏԱՆԻՆ.

Հարուստ յոյսերով իջաւ ասպարէզ,
Մտքի թռիչքի թևերը պարզած.
Քարոզեց սիրոյ Աւետարանը հեղ
Խեղճուկ աշխարհին ոսկուց շլացած:

Գնաց նա այնտեղ, ուր լկտի ամբոխն
Պռնկութեան զիրկ զիշերն ընկղմած
Հարբել էր կարմիր, թմրացնող զինով.
Ու աղօթրանի ժպտից էր զրկուած:

Գնաց նա այնտեղ, ուր խեղճուկ բանուորն
Իւր միսն էր ուտում զիշեր ու ցերեկ,
Երկինքն ու Աստուած խաղառ մոռացած
Ապրում, մեռնում էր անյոյս սրտաբեկ:

Գնաց նա այնտեղ, ուր ճաղատ զլիւով
Հարուստ պարոնը ծնկներին ընկած
Տկար բազմութեան անմեղ արիւնով
Ոսկի արձանին նոր զոհ էր բերած:

Գնաց նա այնտեղ, ուր ձեռին մտրակ
Հարուած էր տալիս անսիրտ պաշտօնեան.
Ու խոնաւ բանտում նորա ձեռքի տակ
Անմեղն էր գտնում վերջին գերեզման:

Գնաց նա այնտեղ, ուր մեծ հոյակապ
Պալատի միջին դահ էր հաստատած.
Ու դահի վրայ արնոտած թագով
Մի անսիրտ, անգութ սուլթան էր բազմած:

Գնաց ու խօսեց, քարոզեց երկար
Սիրոյ աւետարանն սիրաբուխ սրտով,
Բայց աւաղ, աշխարհն զեռ խակ ու տկար
Պաշտեց շարունակ իւր ոսկին խնկով:

Ու յոգնած քաշուեց նա ծովի ափին
Ուր ալիների լեռնաձև շղթան
Շարժում էր շաչում, փրփրում կատաղած
Ու վիշտ էր ելզում յաւիտենական:


Ու ծովի նման՝ իւր հպարտ հոգին
Ալիներ հանեց մտքի անդունդից,

Լեռների նման հսկայ, ահագին,
Ողջը արնոտած թունաւոր վշտից:

Ու զոյգ աչքերից ցայտեցին ազատ
Արցունքի հարուստ մարգարտեշթերն,
Ու խեղճ աշխարհին սիրուց անապատ
Շրթից սահեցին միայն այս խօսքերն:
— Դո՛ւ մեղք քեզ համար, տանջուի՛ր անդադար
Դու վեր նայելու չունիս զօրութիւն,
Վզիդ պողպատ լուծ, տանջուած դալկահար
Տքնի՛ր ու քրտնի՛ր անհանգիստ, անբուռ,
— Բայց երբ քո հոգին վայրագ բողբոջ
Բաղդին թուք ու մուր կրերէ շնորհ,
Դո՛ւ կրճքով կանցնի կայծակ, շանթ ու հուր,
Կղզաս քո մեղքը միմիայն այն օրն:
— Դորձի՛ր ու տանջուի՛ր տանջուի՛ր շարունակ,
Փորը քեզ Աստուած, ոսկին նպատակ,
Բարքը անմիտ բան, բռնութիւնն իշխող,
Դո՛ւ վերջը անմիտ ու լոկ մի բուռ հոգ:

Ու այնուհետեւ նա ծովի ափին
Նստում նայում էր յորդ ալիներին,
Որ իւր հագու պէս ողբով են երգում
Ու վշտից մղուած իրենց ափը կրճում:

1905 թ. Դեկտ. 24, Բագ. սպիտակ բաղաւ.



ՀՀ Ազգային գրադարան



NL0321423

